

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՃԱՌԸ

ՎԱԶԻ ՂԱԶԱՐԵԱՆ

10 Փետրուար 1934ին, Փարիզի Կալոյի մեծ սրահին մէջ կը կայանայ Վահան Թէքէեանի քառասնամեայ դրական գործունէութեան յորելեանական հանդէսը նախագահութեամբ Լեւոն Կիւմիւշկերտանի: Թէքէեանի մասին կը բանախօսեն Արշակ Չօպանեան, Լեւոն Բաշալեան եւ Գեղամ Ֆեներճեան¹:

Յորելեանական Մարմինը կազմուած էր Յունիս 1933ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մատենադարանի սրահին մէջ՝ պատուոյ նախագահութեանը ներքեւ Գերյ. Յովհ. Վրդ. Թորոսեանի, Աւետիս Ահարոնեանի, Տիգրան Կամսարականի, Լեւոն Կիւմիւշկերտանի, Զարեհ պէյ Նուպարի, Արշակ Չօպանեանի եւ Տիգրան խան Քելեկեանի: Կեանքի կոչուած էր նաեւ Կեդրոնական Յանձնաժողով մը՝ անդամակցութեամբ Լ. Կիւմիւշկերտանի՝ ատենապետ, Ա. Չաքրեանի՝ ատենադպիր, Ա. Համբարձումեանի՝ գանձապահ, Յ. Թելեանի, Հ. Պէրպէրեանի եւ Գ. Ֆեներճեանի: Յորելեանական Մարմնի ստակական անդամները կը բաղկացնէին գրողներ, արուեստագէտներ, բանասէրներ, պատմաբաններ եւ ազգային-հասարակական ղէմքեր բոլոր հոսանքներէն եւ կրօնական յարանուանութիւններէն. իրապէս համազգային մարմին մը²:

Յորելեանը կազմակերպողներուն նպատակն էր թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս գնահատել գրող մը, որուն առաջին ստեղծագործութիւնը՝ «Կաղանդը Կեսարիոյ մէջ» արձակ գրութիւն մը, Բ.Կ.Մ. ստորագրութեամբ լոյս տեսած էր 1894ի Յունուար 1ին, Արփիար Արփիարեանի խմբագրած Հայրենիք օրաթերթին մէջ, Պոլիս:

Մրագրուած էր յորելեանական հանդիսութիւններ սարքել նաեւ այլ քաղաքներու եւ գաղութներու մէջ, ինչպէս Մարսէյլ եւ Գահիրէ:

Թէքէեան, բնաւորութեամբ ծայր աստիճան ղիւրազգած եւ բծախնդիր՝ մարդիկ իրմով չզբաղցնելու ուղղութեամբ, ակամայ ընդունած էր իր յորելեանին նշման գաղափարը: «Յորելեանը որուն ձեռնարկեցին հոս քանի մը հոգի՝ ինձմէ անկախ էր բոլորովին. եթէ կարենայի, այսինքն եթէ քիչ մը ի վիճակի ըլլայի (ընդգծումը ինձմէ – Վ.Ղ.), գայն կը մերժէի նոյն իսկ...»³:

Այս «ի վիճակի ըլլալ»ու ակնարկութենէն կարելի է հետեւցնել թէ Թէքէեանի համակերպումին մէջ դեր մը կատարած է իր այն յոյսը՝ թէ յորելեանին առիթով գոյնալիք եկամուտով կարելի կընայ ըլլալ հատորի մէջ չմտած իր արձակ եւ չափածոյ գանազան գործերուն հրատարակութիւնը: 7 Փետրուար 1934ին Յակոբ Օշականին գրած իր նամակին մէջ Թէքէեան կ'ըսէ. «Մտադիր էի եթէ քիչ-չատ «արդիւնաւոր» ըլլար [յորելեանը նիւթական առումով] այդ մնացածներէն ալ [անտիպ քերթուածներէն] զտում մը ընելու... նոր գառագեղի մը (իմա՛ հատոր) վանդակներուն ետեւ բնակեցնելու: Նոյնը՝ լաւագոյն համարած

արձակներու համար... Եկուր տե՛ս որ այդ յոյսը չունիմ հիմա, որովհետեւ «արդիւնաւոր» էն շատ հեռու մնաց ու պիտի մնայ յորելեանը ա՛յդ տեսակէտով»⁴:

Բայց յորելեանական հանդիսութենէն քանի մը ամիս առաջ արդէն Թէքէ-եան կը զգար թէ ձեռնարկը պիտի չըլլար «արդիւնաւոր»: 29 Սեպտեմբեր 1933ին իր սրտամօտ բարեկամին՝ Տիգրան Հաճընլեանի, կը գրէ Փարիզէն. «Խօսքը մէջերնիս՝ այստեղի Յանձնախումբէն յոյսս կտրածի պէս եմ. bonne volonté ունեցողները կարող չեն բան մը ընելու եւ կարողները bonne volonté չունին... կը կարծե՛ս թէ հող [Գահիրէ] կրնայ բան մը ըլլալ: Յանձնախումբին գլխաւոր յոյսը այդտեղի վրայ է կարծեմ»⁵:

Միայն նիւթական չէ, բարոյական իմաստով ալ չուր կը խառնուէր յորելեանի հանդիսութեան, եւ համազգային ընդլծով նշելի յորելեանը կը կորսնցնէր համազգային տարողութիւնը: 1933ի Դեկտեմբեր 24ին, Նիւ Եորքի Ս. Խաչ եկեղեցիին մէջ, պատարագի պահուն կ'աւարեկուի թեմական առաջնորդ Ղեւոնդ Արք. Դուրեան՝ Դաշնակցութեան կարգադրութեամբ:

Ըստ Շահան Շահնուրի վկայութեան, որոշուած էր որ Դաշնակցութեան կողմէ խօսք առնէ Շաւարշ Նարդունի համազգային յորելեանական հանդիսութեան ընթացքին⁶, բայց մինչ Թէքէեան հրապարակաւ կը քննադատէ Դուրեան սրբազանի սպանութիւնը, Նարդունի մամուլով կ'արդարացնէ ոճիրը՝ վարկաբեկելով գոհը: Թէքէեան եւ Նարդունի կը բռնուէին հրապարակային վէճի⁷, որուն իրբեւ հետեւանք Թէքէեան կ'եզրակացնէր՝ Նարդունիի կողմէ «... ո՛նե՛ք պատիւ այլեւս անպատուութիւն կը համարեմ ինձի»⁸:

Այսպիսով, յորելեանի հանդիսութեան նախօրեակին իրադարձութիւնները կը զարգանային այնպիսի ընթացքով մը, որ Թէքէեան իրեն՝ իրբեւ բանաստեղծի՝ ընծայուած որեւէ պատիւ վճռապէս կը մերժէր ընդունիլ ո՛չ միայն Նարդունիէն, այլեւ՝ ըողոր անոնցմէ, որոնք «բանաստեղծը տօնելու արարքին մէջ կը զննն հանրային գործիչը պարսաւելու ղիտաւորութիւն մը», ինչպէս կը պատասխանէր 26 Յունուար 1933ին Հրաչ Զարգարեանի մէկ գրութեան⁹:

8 Փետրուար 1935ին Նիկոսիայէն Վահան Մալէզեանին գրած նամակով կարծէք Թէքէեան հանրագումարի կը բերէր իր «յորելեանական» փորձառութիւնը, ըսելով. «... յորելեան մը այնքան քիչ բան է, որ յանձնախումբին մէջ անունիդ գտնուիլը ուրիշ բան չէ՝ բայց եթէ ոչինչին մասնակցիլ. ատոր փորձառութիւնը ունիմ»¹⁰:

Հետեւեալ շնորհակալական խօսքը, արտասանուած Թէքէեանի կողմէ իր յորելեանի հանդիսութեան օրը, մեզի կը թուի թէ անտիպ է. անոր տպագրեալ օրինակին հանդիպած ենք ո՛չ մէկ տեղ: Հեղինակային բազմաթիւ ուղղումներով եւ սեւագիր վիճակի մէջ ան պահպանուած է Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին մէջ: Լուսապատճինեալ օրինակը ատենին մեզի յանձնած էր կանխահաս մահով բաժնուած Արթո Համբարձումեան, ՀԲԸՄ Փարիզի զրասենեակի երբեմնի տնօրէնը:

Շնորհակալագիրը կը պարզէ Թէքէեանի նկարագրին եւ գրականութեան գլխաւոր գիծերը՝ արժանապատուութեան բարձր գիտակցութիւն, ժուժկալութիւն եւ կոճկուածութիւն, բաւերու հետ ոսկերչական նրբագոյն աշխատանք,

ժամանակէն շուտ ծերացած մարդու զգացողութիւն, նորահաս սերունդին հանդէպ հոգածու վերաբերում, եւլն։

Ան նաեւ կը ծառայէ ամբողջացումին Թէքէեանի ըմբռնումներուն՝ ի մասին հայրենիքի, սփիւռքի, կրօնքի, գրականութեան, քաղաքականութեան եւ մարդ արարածի։

ԽՕՍՔ ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔԻ

Շնորհակալութիւն պիտի ըլլայ առաջին բառը, ինչպէս վերջինն ալ անոր զոր ոմանք, իրենց վեհանձն բարեկամութեան մէջ, արժանի համարեցին այս ցոյցին։

Պատանի էի եւ Հայրենիք¹¹ եւ Մասիս¹² կը կարդայի՝ երբ օր մը Չօհրապի¹³ մէկ արձակին մէջ ոտանատրի մը սա տողին համոյիպեցայ՝

Իմ հարքս անկան եւ ես արդէն ծերացայ։

Հեղինակին անունը չէր տրուած. վերջէն գիտցայ թէ Թերզեանն¹⁴ է ան։

Կը թուի թէ հասկցած էի չափահաս մարդուն խորունկ ու ճիշդ տխրութիւնը հառաչող (բայց ի՞նչ վեհութեամբ) ոտանատրի այդ տողը՝ որովհետեւ սիրեցի եւ միտքս պահեցի զայն. այն ատեն եւ անկէ ի վեր զայն յաճախ յիշեցի, ինչպէս ուրիշներ իրենց սիրային խոռվքը թարգմանող քերթուածի մը մէկ տողը կը յիշեն։

Այսօր է սակայն, որ կ'ըմբռնեմ զայն կատարելապէս եւ կ'արտասանեմ՝ ինձմէ բխածի պէս.

Իմ հարքս անկան եւ ես արդէն ծերացայ։

Իմ հայրերես շատե՛րը ինկան, ու կանուխ, իրենց առոյգ տարիքին մէջ, երբ դեռ շա՛տ կրնային ապրիլ ու կրնային այսօր ամենու երախտիքը ընդունիլ իբրեւ հայրերը մեր նո՛ր գրականութեան։ Անոնց՝ Արփիարիին¹⁵, նոյնինքն Չօհրապիին, յետոյ Հրանդին¹⁶, յետոյ Քելեկեանին¹⁷, եւ յետոյ Թերզեան-Տեմիրճիպաշեան¹⁸-Սեթեան¹⁹ բանաստեղծներուն՝ որ անելի տարեց էին բայց իրենց ամենէն աղուոր քերթուածներուն մեղեդին կը խառնէին նորերու հնչեղ ձայնին. – անոնց է որ ես կը պարտիմ հայ գրուած խօսքին իմ սէրս, անոնց սերմնացանքի՛ն՝ իմ սիրոյս ծլարձակումը, եւ Դուրեանի²⁰ եւ Պեշիկթաշլեանի²¹ կողմէ պեղուած ակօսներուն։ – Եւ ինձի համար մեծ սփոփանք, անսահման ուրախութիւն է գտնել այսօր, այստեղ, իմ շուրջս, երեքը անոնցմէ՝ այդ երեցներէն, որոնք այնքան դեռ երիտասարդ այն ատեն՝ զիս եւ իմ տարեկիցներս ստեղծեցին հայ գրականութեան համար զմայելի հայ-Պոլիսին մէջ, ստեղծեցին իրենց միտքովն ու հոգիովը, իրենց եռանդովն ու ճաշակովը։ Թո՛ղ Բաշալեան²², Կամսարական²³ եւ Չօպանեան²⁴ ընդունին իրենց համար եւ իրենց այն ընկերներուն

համար որ այսօր չկան՝ այս մատուցումը իմ սրտի եւ մտքի տուրքիս:

Բայց... միայն իմ հարքս չէ որ ինկան, այլ եւ եղբարքս, ու ասիկա՝ եթէ կարելի է՝ աւելի՛ տխուր է: Երբ առաջին անգամ մարմին առաւ այս տօնախմբութեան գաղափարը, միտքս ճնշուեցաւ մտածելով թէ իմ սերունդէս առաջինն էի առարկայ եղող այսպիսի ուշադրութեան մը եւ թէ անո՛նք որ տարիքի կամ արժանիքի հետեւանքով ինձմէ առաջ պիտի կոչուէին այդ պատիւին, մեծ մասամբ անհետացած էին արդէն՝ կանխահաս ու եղբրական մահուամբ: Ներեցէք որ ոգեկոչեմ զանոնք, անո՛նք – գլխաւորները միայն յիշելով – անուանուեցան Տիրան Չրաքեան²⁵ եւ Ռուբէն Զարդարեան²⁶, Արտ[աշէս] Յարութիւնեան²⁷ եւ Երուանդ Սրմաքեշխանլեան²⁸, Սուրէն Պարթեւեան²⁹ եւ Աղեքս[անդր] Շաքիեան³⁰, Ատոն Եարճանեան³¹, Գանիէլ Վարուժան³² եւ Միսաք Մեծարեան³³: Այստեղ՝ ես գիս շրջապատուած կ'զգամ անոնց ստուերներովը, անոնցմէ շատերը իմ ընկերներս էին, իմ բարեկամներս, թոյլ տուէք որ ձեր մեծարանքը բաժնեն անոնց հետ եւ ըսեմ իրենց՝ որ եթէ ողջ ըլլային ու մասնաւոր եթէ ամբողջ մնացած, սուգն ու գաղթը չճանչցած ժողովուրդին մէջտեղ ըլլային, այդ ժողովուրդը զուրկագունդ պիտի գար ու պաշարէր զիրենք իր սիրովն ու յարգանքովը:

Ո՛րչափ զգայի է անոնց պակասը...: Բայց ազգ մը չի կրնար իր կորուստները ողբալով միայն ապրիլ: Ապրելու համար՝ ան նորոգումի պէտք ունի եւ նորոգումը կրնայ կատարուիլ ա՛յնքան անցեալի ներշնչումովը՝ որքան ապագային տեսիլքով: Մեր մօտիկ անցեալը, եթէ լաւ նայինք անոր մէջ, միայն կսկիծով չէ որ մեզ պիտի համակէ՝ այլ եւ ոգեւորութեամբ ու հպարտութեամբ: Քիչ բա՞ն էր 50–60 տարուան կարճ ժամանակամիջոցի մը մէջ հայութեան յանկարծակի զարթնումը արեւելքի մութին մէջ, իր դէպի լոյս վազքը խարխալելով, իր գիրկընդխառն ոգորումը ճամբու անթիւ խոչընդոտներուն հետ եւ ընդվզումը, գրոհումն ու բախումը՝ իր դեռ անբարակական, դեռ իր մէջ նոր գոյացող սրտի, մտքի եւ բազուկի ուժով՝ օտար գերգոր ուժին դէմ: Քննադատել խստօրէն նոյն-իսկ՝ այդ դիցազնական ելոյթը առաջնորդող միտքը (մէր միտքը նորէն) այո՛, բայց զայն յարուցանող ոգին՝ ո՛չ, որքան ալ անիկա սուղ արժած ըլլայ մեզի, ոչ՝ որովհետեւ մենք միշտ պէտք ունինք անոր: Միայն թէ այդ ուժին խնայողութեան՝ այսինքն պահպանումին ու յաւելումին շրջանն է հիմա, եւ ոչ թէ գործածութեանը, ո՛չ թէ ծախսումին: Ինչ որ մեր այսօրը իր մէջ ունի կենարար ու շինարար հայ ապագային տեսակետով՝ պզտիկ հողամաս մըն է, եւ այդ պզտիկ հողամասին վրայ մտածող եւ աշխատող ժողովուրդի սակաւաթիւ բայց հոծ զանգուած մըն է՝ որուն կ'երթայ հիմա մեծագոյն բաժինը մեր հաւատքին եւ յոյսին, մեր ցեղային գոյութեան պահպանման հաւատքին ու յոյսին: Խ[որհրդային] Հայաստանը հայ մարդուն, հետեւաբար հայ հոգիին, հետեւաբար հայ լեզուին ու գրականութեան ալ՝ այսօրուան ու վաղուան մեծագոյն տնկարանն է: Զաղաքական դաւանանք մը չէ ան՝ այլ գրողի՛ն իր մշակած հողը, իր կառուցած շէնքին եմքագետինը ստուգելու անհրաժեշտ պահանջքը:

Բայց Խ[որհրդային] Հայաստանը չէ միայն՝ որ նուազած հայութիւնը կը պարունակէ իր մէջ: Երբ մտածումս երկկէն այսօրին եւ այսօրէն վաղուան կ'երթայ ապահովուելու համար թէ հայ գրականութիւնը պիտի շարունակէ հայ հոգին ջերմացնել, անիկա սիրով եւ յուզումով կ'ողջունէ նոյնքան Խ[որհրդային]

Հայաստանի որքան արտասահմանի երիտասարդ գրականությունն ու գրողները, հոն եւ հոս իրաքանչիւր իսկական գրողի մէջ գտնելով լրացուցիչ մէկ մասը այն պահող ու նորոգող, խորացնող ու բարձրացնող զօրութեան՝ որ ազգի մը թէ՛ գոյութեան իրաւունքը եւ թէ՛ պահպանման ու զօրացման միջոցը կը կազմէ: Քայց տարբեր են գրականութեան, արուեստի եւ գիտութեան զարգացման պայմանները հոն Խ[որհրդային] Հայաստանի եւ հոս արտասահմանի մէջ: Մինչդէռ հոն հայ պետութիւնը հոգ կը տանի, հոս արտասահմանի մէջ հայ մտքի մշակը – ինչպէս կը կոչենք զայն դեռ – նորահաս, երիտասարդ մշակը մանաւանդ որ ապացոյցը տուեր է թէ գիտէ եւ կ'ուզէ մշակել, գորկ կը մնայ այդ հնարարութենէն՝ որովհետեւ արօր չունի, կամ որովհետեւ սերմը գոր կը ցանէ՝ զինք կազդուրելու չափ անգամ հաց չի տար իրեն: Երեք գրողի մը հանդէպ այսօր ազնուօրէն իր համակրանքն յայտնող արտասահմանի հայ ժողովուրդին՝ այս գրողը պարտք կը համարէ ըսել ասիկա: Որքան ալ նեղութեամբ եւ անձկութեամբ պաշարուած ըլլայ՝ ժողովուրդ մը պէտք է սիրէ իր գրականութիւնը ինչպէս իր ազգութիւնը կը սիրէ եւ պէտք է հոգ տանի անոր՝ ինչպէս իր եկեղեցիներուն եւ իր դպրոցներուն հոգ կը տանի:

Եւ հիմա, կնքելէ առաջ խօսքս, արտօնութիւն կը խնդրեմ ձեզնէ, սիրելի հայրենակիցներ, քանի մը ընդհանուր գաղափարներ եւ համոզումներ յայտնելու – որոնք խորապէս իմն են – ինձմէ բանաձեւուած ըլլան անոնք թէ ուրիշներէ: Ընդունեցէք ասիկա իրրեւ ամէնէն ճիշդ արտայայտութիւնը ձեզի հանդէպ այս պահուն զգացած յարգանքիս, ներելով միայն անոնց ներկայացման անկապ եղանակը որ կարճ եւ արագ ընելու հարկադրանքէն կու գայ:

– Կրօնքը հասարակ ժողովուրդին համար հնարուած թմրեցուցիչ մը չէ, ինչպէս միթապաշտները կ'ըսեն: Ընդհակառակն՝ զարթուցիչ մըն է ան՝ հաւասարապէս թէ մեծերուն եւ թէ փոքրերուն համար: Չեն հասկնար թէ ինչպէս մարդ կրնայ չհաւատալ անմահ Աստուծոյ մը եւ հաւատալ իր պատկանած ցեղին, իր դաւանած սկզբունքներուն, իր կատարած գործին անմահութեան:

– Մարդը Աստուծոյ մըն է այն մարդուն համար որ չի հաւատար Աստուծոյ:

– Մարդուն մարմինը՝ որ գիտութեան միջոցաւ մեծցաւ՝ պէտք ունի այսօր անելի՛ հոգիի, – «հոգիի յանելուած»ի մը՝ մեծ Պերկտոնի տարազումով՝ որունն է այս մտածումը:

– Արուեստը մեր մէջ կը սնուցանէ դիցազնական այն ոգին՝ որու շնորհիւ պատրաստ ենք ամէն բանի որ պիտի պահանջուի մեզմէ:

– Արուեստագետի մը համար շատ թանկագին է այն բարեկամութիւնը որ անձանօրէն իրեն կու գայ, ան կը համապատասխանէ կարծես իր ստեղծման – տենդին՝ որ նիւթն է վայրկեանին սահմանափակումէն անդին անցնելով կ'ուղղուի տարածութեանը միջոցին եւ ժամանակին, անկէ կը սպասէ իր հանգիստն ու իր գովացումը, անոր հեռաւոր ու լայն պահեստներէն ստանալ կ'ուզէ փոխարէնը իր ճիգին, իր սէրով, յոյսով ու ցաւով՝ միշտ ցաւով կատարած կեանքի եւ արուեստի ճիգին:

– Թոյլատու ըլլալ ուրիշի գաղափարին հանդէպ՝ տկար մտքի նշան է, անթոյլատու ըլլալ՝ նեղ մտքի նշան է: Պէտք եղածը սա՛ է՝ բնատրութեամբ հակա-

մետ ըլլալ ուրիշին գաղափարներուն չհանդուրժելու եւ տրամախոհութեամբ ինքզինքը ստիպել որ հանդուրժէ անոնց:

– Քաղաքականութիւնը ուժը ունի բաժնելու մինչեւ իսկ այն անձերը որ կը միացնէ: Մարդիկ երբեմն կը համաձայնին սկզբունքներու վրայ, երբեք անոնց հետեւանքներուն վրայ:– Ասկէ հետեւցնելով՝ մենք հայերս, մանաւանդ տարագիր հայերս՝ որ այնքան պէտք ունինք միութեան, կրնանք միանալ այն պայմանով միայն՝ որ քաղաքականութիւն չընենք, մտքերու զինաթափութիւն, այս պայմանով միայն հայ անհատներն ու խումբերը կրնան իրարու քով սեղմուիլ եւ զանգուած կազմել, դիմադրող եւ տեւող: Ասոր համար ալ՝ աւելի մարդկայնութիւն, աւելի մարդկային զգացում պէտք է ներմուծել մեր ազգային զգացումին մէջ:

– Մարդ մը, լաւ միտք պահեցէք ասիկա, ոչ հրեշտակ [է], ոչ սատանայ: Մարդ մը՝ պիրկ չուանի վրայ էակ մըն է, որ կը քալէ զգուշութեամբ, հաւասարակշիւ, իր կշռածողին մէկ ծայրը ունենալով միտքը, խիղճը, հոգին եւ միւս ծայրը՝ մարմինը, բնագոյր եւ ամէն ինչ որ խորհրդածածուկ է: Հաւասարակշիւ, այո՛,– ինչ որ սուկայի՝ դժուար է:

Շնորհակալութեան շատ պարտքեր ունիմ հատուցանելիք: Էն առաջ Աստուծոյ, յետոյ իմ ցեղիս եւ ծնողքիս՝ որոնց կը պարտիմ այն քիչը գոր ունիմ եւ որով կը գոհանամ այսօր այլեւս: Իմ ուսուցիչներուս նաեւ.– իմ երեց, տարեկից ու կրտսեր բարեկամներուս որոնք ուրիշ ամէն բանէ աւելի՝ կենացը քաղցրացուցին եւ կը քաղցրացնեն ինձի համար: Օտար մեծ ժողովուրդի մը, անոր որուն մայրաքաղաքին մէջ հիւրաբար կ'ապրիմք այսօր եւ որուն մտատրական մեծութիւններէն, որուն արուեստներուն չափի եւ շնորհի տիրապետող տարրէն ազդուած եմ վաղուց՝ աւելի քան ուրիշ ռեւօտար մտքէ եւ արուեստէ:

Իսկ մասնատրապէս տօնախմբութեան այս շատ բարի, բարեհաճ ձեռնարկին համար՝ նախ այն բարեկամներուս որ յղացան ու նախաձեռնեցին զայն, ձեզի, Տէր Նախագահ, որ ձեր հայու սրտին ջերմութիւնը կ'աւելցնէք ձեր ֆրանսացի գրագէտի վաւերական տաղանդին, այն մեծանուն գրողներուն եւ այն երեւելի ազգայնիներուն որոնք իբրեւ պատուոյ նախագահ եւ իբրեւ անդամ Յանձնախումբի՝ շուք եւ փայլ տուին ձեռնարկին, հանդէսի Կարգադիր Յանձնախումբի դիւանին անդամուիլին եւ անդամներուն, ինչպէս եւ անոնց որ ուրիշ քաղաքներու եւ երկիրներու մէջ նոյնը ըրին ու կ'ընեն, հայ մամուլին, որ առանց խտրութեան, հոս եւ ամէնուրեք, այնքան ազնուօրէն արձագանգ տուաւ համակրանքի այս արտայայտութեան, այդ մամուլին էջերէն իրենց սիրոյ եւ գնահատանքին բառը արտասանող երեց եւ կրտսեր եղբայրակիցներուս, բանախօսներուն՝ որոնցմէ երկուքը իրենց մեծ գրագէտի հեղինակութեամբ եւ երրորդը իր գեղագէտ–քննադատի ճանչցուած տաղանդովը ներկայացուցին [զիս], երգի եւ բեմի այն հմայիչ արուեստագէտներուն՝ որոնցմէ ոմանք ստեղծագործութեամբ, ուրիշներ քարգմանութեամբ՝ իրենց մասնակցութեան պատիւը ինձի եւ վայելքը ընծայեցին ամէնուն, հայ կրօնական եւ աշխարհիկ հաստատութեանց ու հաւաքական մարմիններուն՝ որոնք ուղերձներով զիս պատուեցին, եւ ձեզի վերջապէս, սիրելի բարեկամներ, որ նոյնը ըրիք ձեր անձնական ներկայութեամբ՝ մեծ, խորին ու սրտագին շնորհակալութիւն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Վաչէ Ղազարեան, «Ժամանակագրութիւն Վահան Թերեւանի», *Շիրակ*, ԻԶ. տարի, քիւ 9, Սեպտեմբեր 1982, էջ 59:
2. *Յորեկեան Վահան Թերեւանի քառասնամեայ գրական գործունէութեան*, հրատարակուած Կեդր[ոնական] Յանձնախումբին կողմէ, Փարիզ, 1933:
3. Փարիզէն Գահիրէ, Տիգրան Հաճընլեանին ուղղուած 31 Օգոստոս 1933 թուակիր նամակէն, Վաչէ Ղազարեան, *Մամուլի մէջ տպուած եւ անտպայ երկեր ու նամակներ Վահան Թերեւանէն*, Պէյրութ, 1987, էջ 285:
4. Աւետիս Սանճեան, Վահան Թերեւան-Նամականի, *Լոս Անճելոս*, 1983, էջ 373:
5. Վաչէ Ղազարեան, *Մամուլի*, էջ 287: Տե՛ս նաեւ նոյնին ուղղուած 8 Մարտ 1934 նամակը, անդ էջ 289:
6. Գրիգոր Քօստեան, *Գիր եւ գիծ*, Պոստոն, 1998, էջ 83: Նաեւ տես՝ Վաչէ Ղազարեան, «Վահան Թերեւանը ժամանակակիցներու նամակներուն մէջ», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, հատոր Թ., Պէյրութ, 1981, էջ 232-233:
7. Վաչէ Ղազարեան, *Մամուլի*, էջ 316-322:
8. Նոյն, էջ 322:
9. Նոյն, էջ 288:
10. Աւետիս Սանճեան, *Նամականի*, էջ 392:
11. *Հայրենիք*՝ օրաթերթ, լոյս տեսած Պոլիս 1891-1896, խմբագրապետութեամբ Արփիար Արփիարեանի:
12. *Մասիս*՝ պոլսահայ մամուլ, լոյս տեսած Պոլիս 1852-1908:
13. Զօհրապ, Գրիգոր՝ գրող, ապրած է 1861-1915:
14. Թերզեան, Թովմաս՝ բանաստեղծ, ապրած է 1840-1909:
15. Արփիար, Արփիարեան՝ գրող, ապրած է 1851-1908:
16. Հրանդ՝ Մելքոն Կիրճեան՝ գրող, ապրած է 1859-1915:
17. Քելեկեան, Տիգրան՝ ազգային գործիչ, ապրած է 1868-1951:
18. Տեմիրճիպաշեան, Եղիա՝ գրող, ապրած է 1851-1908:
19. Սեբեան, Յովհաննէս՝ բանաստեղծ, ապրած է 1853-1930:
20. Դուրեան, Պետրոս՝ բանաստեղծ, ապրած է 1851-1872:
21. Պեշիկբաշեան, Սկրտիչ՝ բանաստեղծ, ապրած է 1828-1868:
22. Բաշալեան, Լեւոն՝ գրող, ապրած է 1868-1943:
23. Կամսարական, Տիգրան՝ գրող, ապրած է 1866-1941:
24. Ծօպանեան, Արշակ՝ գրող, ապրած է 1872-1954:
25. Տիգրան Զրաքեան՝ գրող, ապրած է 1875-1921:
26. Ռուբէն Զարդարեան՝ գրող, ապրած է 1874-1915:
27. Արտաշէս Յարութիւնեան՝ գրող, ապրած է 1873-1915:
28. Երուանդ Սրմաքեշխանլեան՝ Երուխան, գրող, ապրած է 1870-1915:
29. Սուրէն Պարթեւեան՝ գրող, ապրած է 1876-1921:
30. Աղեքսանդր Ծաբլեան՝ ժամանակակից գրող:
31. Ատոն Եարճանեան՝ Սիամանթօ, բանաստեղծ, ապրած է 1878-1915:
32. Դանիլ Վարուժան՝ բանաստեղծ, ապրած է 1884-1915:
33. Միսաք Մեծարեան՝ բանաստեղծ, ապրած է 1886-1908:

VAHAN TEKEYAN'S SPEECH OF THANKS,
GIVEN AT HIS JUBILEE CEREMONY
(Summary)

VATCHE GHAZARIAN

In February 1934, the fortieth anniversary of the Armenian poet Vahan Tekeyan's literary life was celebrated in Paris. Tekeyan hoped the hosting committee would be able to raise money, to publish some of his unpublished poetic works. He was dissatisfied, however. The committee was able to achieve nothing but the Jubilee event.

In his speech of thanks, Tekeyan paid tribute to elderly Armenian authors, paid respects to the Armenian authors of his generation, (most of whom were massacred during the Armenian Genocide of 1915), expressed optimism regarding Soviet Armenia from which he had very high expectations, called the public to love its literature as it loved its nation and to take care of it as it had taken care of its schools and churches. He concluded with a summary of his world perception which includes the following beliefs:

- Religion is a basic means of awareness.
- Man is God to all those who don't believe in God.
- Man's body needs more soul and additional spirit today.
- Art breeds in us the epic spirit with which we are ready to realize whatever is requested from us.
- The friendship of a foreigner to an artist is more precious for the latter.
- We Armenians can unite only if we don't play politics. This is why more humane consciousness should be added to our national feeling.
- Man is neither an angel, nor a satan, he walks on a string where the mind, conscience and soul are on the one end and body and instinct on the other. Balancing between these is the most important and most difficult task of man.